ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի նոյեմբերի 6-ին

ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. 29.05.02 ՀՕ-368-Ն, փոփ. 09.04.07 ՀՕ-181-Ն, 11.10.07 ՀՕ-198-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-287-Ն)

Հոդված 23.5. Ապահովման միջոց հանդիսացող ակտիվների և հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունների փոխանցումը

“1. “Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնակից թողարկողի կամ կենտրոնացված թողարկողի սնանկության (անվճարունակության) դեպքում, հիփոթեքային կառավարիչը ռեգիստրում գրանցված ակտիվները և հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները, որպես մեկ ամբողջություն, Կենտրոնական բանկի թույլտվության հիման վրա փոխանցում է այլ թողարկողի սույն հոդվածով սահմանված կարգով:

Ընդ որում, մասնակից թողարկողի սնանկության (անվճարունակության) դեպքում, վերջինիս այն ակտիվները, որոնք ապահովում են կենտրոնացված թողարկողի կողմից այդ մասնակից թողարկողին տրամադրված ապահովված վերաֆինանսավորման վարկերը, կարող են փոխանցվել կենտրոնացված թողարկողին կամ՝ վերջինիս համաձայնությամբ՝ այլ՝ անվճարունակ չճանաչված թողարկողին, ներառյալ՝ մասնակից թողարկողին:”

~~1. “Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնակից թողարկողի կամ կենտրոնացված թողարկողի սնանկության (անվճարունակության) դեպքում, հիփոթեքային կառավարիչը ռեգիստրում գրանցված ակտիվները և հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները, որպես մեկ ամբողջություն, Կենտրոնական բանկի թույլտվության հիման վրա փոխանցում է այլ թողարկողի սույն հոդվածով սահմանված կարգով:~~

~~Ընդ որում, մասնակից թողարկողի սնանկության (անվճարունակության) դեպքում, վերջինիս այն ակտիվները, որոնք ապահովում են կենտրոնացված թողարկողի կողմից այդ մասնակից թողարկողին տրամադրված ապահովված վերաֆինանսավորման վարկերը, կարող են փոխանցվել կենտրոնացված թողարկողին կամ՝ վերջինիս համաձայնությամբ՝ այլ՝ անվճարունակ չճանաչված թողարկողին, ներառյալ՝ մասնակից թողարկողին:~~

Comment [M1]: Այս մասը շարադրվել է նոր խմբագրությամբ

2. Հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները փոխանցելիս այդ պարտատոմսերի սեփականատերերի համաձայնությունը չի պահանջվում:

3. Կենտրոնական բանկի կողմից փոխանցման թույլտվությունն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, հիփոթեքային կառավարիչը պարտավոր է այդ մասին հայտարարություն հրապարակել Հայաստանի Հանրապետությունում առնվազն 2000 տպաքանակով տպագրվող մամուլում, Հայաստանի Հանրապետության տարածքում հասանելի էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցներով՝ թողարկողի ինտերնետային տնային էջում, ինչպես նաև ծանուցել հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերին:

4. Կենտրոնական բանկի կողմից փոխանցման թույլտվությունն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, հիփոթեքային կառավարիչը պարտավոր է գրանցման ներկայացնել ազդագրի փոփոխությունները՝ պայմանավորված թողարկողի փոփոխությամբ:

(23.5-րդ հոդվածը լրաց. 26.05.08 ՀՕ-102-Ն)